

Ուժի մեջ է 01.03.2020-ից  
Տարածվում է արդեն գործող վարկային գծերի պայմանագրի վրա 16.03.2020թ-ից  
Հավելված 2



ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՄԻՋՈՑՆԵՐ

## Բաժին 1. Կիրառվող հիմնական հասկացություններ

- **Վարկառու՝** «Մոգո Հիմա» վարկատեսակի շրջանակներում վարկային գծի պայմանագիր ստորագրած ֆիզիկական անձ,
- **Ընկերություն՝** «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ,
- **Պայմանագիր՝** Ընկերության և Վարկառուի միջև ստորագրված վարկային գծի պայմանագիր, որով սահմանվում են Ընկերության կողմից Վարկառուին տրամադրվող Վարկի ընդհանուր սահմանաչափը և դրա շրջանակներում տրամադրվող առանձին վարկի(վարկերի) չափը, տոկոսադրույքը, մարման վերջնաժամկետը և եղանակը, սպասարկման վճարները, էական այլ պայմաններ,
- **Վճարային տերմինալ՝** կանխիկ դրամի ընդունման հնարավորությամբ ավտոմատ գանձման սարք,
- **Առաջին վարկ՝** «Մոգո Հիմա» վարկատեսակի շրջանակում Վարկառուին տրամադրված առաջին վարկ,
- **Կրկնվող վարկ՝** «Մոգո Հիմա» վարկատեսակի շրջանակում Վարկառուին տրամադրված առաջին վարկին հաջորդող բոլոր մնացած վարկերը
- **Վարկ՝** Առաջին և/կամ Կրկնվող վարկ,
- **Վարկի վերջնաժամկետի երկարաձգում՝** Վարկի վերջնաժամկետի երկարաձգում, որն իրականացվում է Վարկավորման հիմնական պայմանների և պատասխանատվության ընդհանուր պայմանների շրջանակում՝ համաձայն Վարկառուի կողմից տրված իրահանգի,
- **Ընդհանուր սահմանաչափ՝** Վարկի առավելագույն սահմանաչափ, որի սահմաններում Ընկերությունը իրականացնում է Վարկի(երի) տրամադրում Վարկառուին՝ նրա դիմում-հայտերի հիման վրա և Ընկերության կողմից դրանց հաստատման դեպքում,
- **Անձնական էջ՝** [www.mogohima.am](http://www.mogohima.am) կայքի Վարկառուի անձնական էջ,
- **Պայմաններ՝** «Մոգո Հիմա» վարկատեսակի համար նախատեսված սույն վարկավորման ընդհանուր պայմաններ և պատասխանատվության ընդհանուր միջոցները:
- **Արբիտրաժային դատարան՝** միասին կամ առանձին հիշատակվող «ԱՐԲԻՏՐԱԺ» ՍՊԸ-ում մշտապես գործող արբիտրաժային դատարան:

## Բաժին 2. Վարկի մարման կարգը և տոկոսագումարների հաշվարկման ձևը

**2.1.** Վարկը Վարկառուի կողմից մարվում (վերադարձվում) է վերջնաժամկետին՝ Կրկնվող վարկերի դեպքում նաև հաշվեգրված տոկոսագումարի և սպասարկման վճարի հետ միասին: Վարկի մարման վերջնաժամկետի երկարաձգում իրականացնելու դեպքում վերջնաժամկետը հաշվարկվում է համաձայն սույն Պայմանների 2.5 կետի, ընդ որում՝ ինչպես կրկնող վարկերի, այնպես էլ դրանց վերջնաժամկետների երկարաձգման դեպքերում՝ վերջնաժամկետի և երկարաձգման վճարի վերաբերյալ տեղեկությունը հասանելի է Վարկառուին իր Անձնական էջում, ինչպես նաև Վճարային տերմինալի էկրանին՝ համապատասխան իրահանգը տալու պահին:

**2.2.** Վարկի, տոկոսագումարների, սպասարկման վճարների, ժամկետի խախտման դեպքում նաև տույժերի մարումը (վերադարձը) կարող է իրականացվել Վճարային տերմինալների միջոցով՝ համապատասխան վճարումն իրականացնելով համապատասխան Պայմանագրի համարով: Վճարված գումարից Վարկառուի պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ. ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տույժ, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված Վարկի ամսական սպասարկման վճար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումար, Վարկի գումար, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Վարկը վաղաժամկետ մարվելու դեպքում մարումներն իրականացվում են Վարկառուի կողմից առաջարկված հերթականությամբ, եթե մարման հերթականություն չի առաջարկվում Վարկառուի կողմից, ապա մարումը իրականացվում է սույն կետում նշված

հերթականությամբ: Պայմանագրով Վարկառուի դրամական պարտավորությունները կարող են կատարվել երրորդ անձանց կողմից:

**2.3.** Տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ Վարկառուին տրամադրված Վարկի մնացորդի վրա՝ որպես հիմք ընդունելով տարին օրացուցային, բաժանարարը 360 օր: Տոկոսների հաշվարկը սկսվում է վարկի տրամադրման ամսաթվից: Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում վարկով հաստատված դրամական միջոցները Վարկառուին հասանելի դառնալու ամսաթիվը, այն է՝ գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի տարանցիկ հաշվին փոխանցելու օրը:

**2.4.** Վերջնաժամկետի երկարաձգումը իրականացվում է Պայմանագրի 1.3.4. կետում նշված սակագների և պայմանների համաձայն՝ առանց երկարաձգված ժամկետի համար վարկի ամսական տոկոսադրույքի և սպասարկման վճարի կիրառման: Ընդ որում գործող վարկային գծերի պայմանագրերի շրջանակում 19.08.2019թ-ից հետո տրամադրված վարկերի երկարաձգման համար անհրաժեշտ է միայն երկարաձգման վճարի իրականացում, ընդ որում անհրաժեշտ վճարը պետք է իրականացվի մեկ օրվա ընթացքում, իսկ մինչ այդ հաշվարկված տոկոսագումարի, սպասարկման վճարի և առկայության դեպքում տուժանքի գումարի վճարումը իրականացվում է վարկի մարման երկարաձգված ժամկետի ավարտին: Որպեսզի կատարված մարումը դիտարկվի որպես երկարաձգման վճար, անհրաժեշտ է մուծումն իրականացնելիս երկարաձգման պահանջի վերաբերյալ համապատասխան նշում կատարել և երկարաձգման համար անհարժեշտ վճարը իրականացնել մեկ օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ մուծված գումարը կուղղվի պարտավորության մարմանը համաձայն 2.2 կետում նշված տրամաբանության: Ընդ որում երկարաձգման համար անհրաժեշտ գումարից վճարված գումարի մինչև 300 դրամ պակաս լինելը, համարվում է բավարար երկարաձգումը հաստատելու համար:

Գործող վարկային գծերի պայմանագրերի շրջանակում մինչև 19.08.2019թ. տրամադրված վարկերի երկարաձգման համար անհրաժեշտ է իրականացնել գործող վարկի սպասարկման վճարի, ողջ ժամանակահատվածի համար նախատեսված տոկոսագումարի, տուժանքի (առկայության դեպքում) մարում, ինչպես նաև երկարաձգման վճարի իրականացում, ընդ որում անհրաժեշտ վճարը պետք է իրականացվի մեկ օրվա ընթացքում : Որպեսզի կատարված մարումը դիտարկվի որպես երկարաձգման վճար, անհրաժեշտ է մուծումն իրականացնելիս երկարաձգման պահանջի վերաբերյալ համապատասխան նշում կատարել և երկարաձգման համար անհարժեշտ վճարը իրականացնել մեկ օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ մուծված գումարը կուղղվի պարտավորության մարմանը համաձայն 2.2 կետում նշված տրամաբանության:

**2.5.** Եթե վերջնաժամկետի երկարաձգումը կատարվում է նախնական վերջնաժամկետից հետո, ապա երկարաձգման օր է հանդիսանում երկարաձգման վճարի իրականացման օրը և նոր վերջնաժամկետը հաշվարկվում է այն վճարելու օրվանից, իսկ, եթե մինչև նախնական վերջնաժամկետի ավարտը, ապա երկարաձգման օր է համարվում գործող վարկի վերջնաժամկետը և նոր վերջնաժամկետի հաշվարկը սկսվում է նախնական վերջնաժամկետի օրվան հաջորդող օրվանից:

**2.6.** Վարկառուի կողմից սույն Պայմանների շրջանակում ստորագրված Պայմանագրում նշված վճարման վերջնաժամկետը խախտելու դեպքում Վարկի օգտագործման համար նախատեսված Անվանական տոկոսադրույքով տոկոսի հաշվեգրումը դադարում է, և ժամկետին չվերադարձված Վարկի մայր գումարի նկատմամբ հաշվեգրվում է տույժ՝ օրական 1%-ի չափով, բայց տարեկան ոչ ավել քան 45 օրացույցային օր:

**2.7.** ՌԵՇԵՆՍԻՆՖՈՐՄՈՒՆՆՆՆԵՐԸ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ և ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ; ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ ԱՅՅԵԼԵԼՈՎ WWW.MOGOHEMA.AM ՀԱՍՑԵՈՎ;

**2.8.** Առաջին և Կրկնվող վարկերի մասով 6 հերթական երկարաձգման իրականացման դեպքում (ընդ որում 14 օրով երկարաձգումը հաշվարկվում է որպես 0.5, իսկ 30 օրով երկարաձգումը՝ որպես

1 երկարաձգում), հաճախորդի ընդհանուր պարտավորությունը բաշխվում է հավասարաչափ 12 ամիսների միջև՝ դադարեցնելով տոկոսի, սպասարկման վճարի և տույժերի հաշվեգրումը: Վերակառուցման ժամանակ որպես առաջին մարման օր է ընդունվում հաճախորդի կողմից վերջին իրականացված երկարաձգման արդյունքում ձևավորված վերջնաժամկետը:

### **Բաժին 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

#### **3.1. Ընկերությունն իրավունք ունի՝**

3.1.1. Պայմանագրում նշված ժամկետների խախտմամբ Վարկառուի կողմից պարտքեր ձևավորելու դեպքում անակցեպտ կարգով՝ առանց վերջինիս լրացուցիչ հանձնարարությունների, գանձել պարտքի գումարները վերջինիս ՀՀ ցանկացած բանկում գտնվող բանկային հաշիվներից,

3.1.2. Պայմանագրով սահմանված հիմքերի առկայության դեպքում ցանկացած ժամանակ Վարկառուից պահանջել վաղաժամկետ կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով,

3.1.3. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր,

3.1.4. Միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի 1.3.2. - 1.3.4. կետում նշված պայմանները՝ փոփոխության վերաբերյալ նախապես օրենքով սահմանված կարգով Վարկառուին տեղեկացնելով:

3.1.5. Ընկերությունը սույն Պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) գործարքով կարող է փոխանցել (զիջել) այլ անձի, այն չափով, որ այդպիսի իրավունքները փոխանցվում են ցեսիոնարին (իրավահաջորդին)՝ համաձայն Ընկերության և ցեսիոնարի (իրավահաջորդի) միջև կնքված պայմանագրի: Սույն Պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) այլ անձի փոխանցելիս (զիջելիս), Ընկերությունը վերջինիս է փոխանցում (զիջում) նաև ապահովման միջոցից բխող իր իրավունքները:

1) Փոխանցման (զիջման) ամսաթվից հետո, եթե Ընկերությունը ցանկացած երրորդ անձին (իրավահաջորդին) փոխանցում (զիջում) է Վարկառուի հանդեպ և իրավունքները և իր պարտականությունները.

ա) փոխանցողը (զիջողը) դադարում է իրականացնել իր իրավունքները, ինչպես նաև ազատվում է սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելուց,

բ) իրավահաջորդը դառնում է սույն Պայմանագրի կողմ, որպես պարտատեր՝ օժտված իրավունքներով և պատասխանատու՝ իրականացնելու իր պարտավորությունները, որոնք տարբերվում են սույն Պայմանագրում նշվածներից միայն այնքանով, որ իրավահաջորդը փոխանցողի (ցեղենտի) փոխարեն է իրավունքներ և պատասխանատվություն ունենում:

2) Փոխանցման (զիջման) ամսաթվից հետո, եթե Ընկերությունը փոխանցում (զիջում) է սույն Պայմանագրից բխող Վարկառուի հանդեպ միայն իրավունքներ (պահանջ) այն չափով, որ այդպիսի իրավունքները փոխանցվում են ցեսիոնարին՝ համաձայն Ընկերության և ցեսիոնարի (իրավահաջորդի) միջև կնքված պայմանագրի.

ա) փոխանցողը (զիջողը) շարունակում է սպասարկել և կառավարել պահանջը՝ համաձայն սույն Պայմանագրի,

բ) ցեսիոնարը չի դառնում սույն Պայմանագրի կողմ,

գ) Վարկառուն շարունակում է Ընկերության հանդեպ կատարել սույն Պայմանագրից բխող իր պարտավորությունները՝ այն չափով և ծավալով, ինչպես նշված է սույն Պայմանագրում, քանի դեռ հակառակի վերաբերյալ պահանջ չի ներկայացված ցեսիոնարի (իրավահաջորդի) կողմից: Պարտավորությունների այդպիսի կատարումը կհանդիսանա պարտավորությունների կատարում Ընկերության և ցեսիոնարի հանդեպ:

3.1.6. Առանց լրացուցիչ համաձայնագրի ստորագրման, հաճախորդի ընդհանուր պարտավորությունը՝ հավասարաչափ բաշխել 12 ամիսների միջև՝ դադարեցնելով տոկոսի, սպասարկման վճարի և տույժերի հաշվեգրումը:

#### **3.2. Ընկերությունը պարտավոր է՝**

3.2.1. Ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, Վարկառուին ներկայացնել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված տեղեկատվությունը, այսուհետ՝ «Պարտադիր

ներկայացման տեղեկատվություն»՝ էլեկտրոնային փոստի միջոցով, եթե Վարկառուն չի հրաժարվել այդ տեղեկությունները էլ. փոստի միջոցով ստանալու իր իրավունքից:

3.2.2. Վարկառուին տրամադրել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը:

3.2.3. Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը Վարկառուին տրամադրել համապատասխան փոփոխության որոշման կայացումից հետո, սակայն ոչ ուշ, քան որոշումն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, այլ դեպքերում՝ Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում կատարված փոփոխությունը Վարկառուին տրամադրել ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և այդ մասին տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո:

### **3.3. Վարկառուն իրավունք ունի՝**

3.3.1. Առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել Պայմանագիրը դրա ստորագրմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ),

3.3.2. Ժամկետից շուտ լրիվ կամ մասնակի մարել (վերադարձնել) Վարկը՝ փաստացի մարման (վերադարձման) օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների, տուժանքի և տվյալ ամսվա համար հաշվարկված ամսական սպասարկման վճարի հետ միասին:

3.3.3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԸ ՅԱՆԿԱՅԱԾ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՎԵԼ: ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՈՒՅԺԵՐ ՉԵՆ ԳԱՆՁՎՈՒՄ:

### **3.4. Վարկառուն պարտավոր է՝**

3.4.1. Պայմանագրում նշված վճարման վերջնաժամկետին համապատասխան մարել (վերադարձնել) Վարկը, վճարել հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները, ամսական սպասարկման վճարները և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված այլ վճարները,

3.4.2. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման կետանց թույլ տալու դեպքում Ընկերության պահանջով, վճարել Պայմանագրով նախատեսված տուժանքը.

3.4.3. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները վաղաժամկետ կատարելու մասին Ընկերության գրավոր պահանջը ստանալուց հետո Պայմանագրում նշված ժամկետում վաղաժամկետ ու ամբողջությամբ կատարել պարտավորությունները,

3.4.4. Չհայտնել այլ անձի իր Անձնական էջի տվյալները (այդ թվում գաղտնաբառը): Հեռախոսի կորստի և կորստի արդյունքում Անձնական էջի այլ անձանց կողմից կիրառման հետ կապված ռիսկը կրում է Վարկառուն: Հաճախորդի հեռախոսահամարին ուղարկված Գաղտնաբառի օգտագործմամբ Վարկ ստանալու դիմում-հայտն անվերապահորեն համարվում է Վարկառուի կողմից ներկայացված:

## **Բաժին 4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1. Վարկառուն պատասխանատվություն է կրում օրենքով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից:

4.2. Տուժանքի վճարումը Վարկառուին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել Վարկառուից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու Ընկերության իրավունքը:

4.3. Ընկերությունը միակողմանիորեն, առանց Վարկառուի հետ լրացուցիչ փաստաթուղթ կազմելու, Պայմանագրով նախատեսված կարգով Վարկառուին ծանուցելով, իրավունք ունի փոփոխել տուժանքի չափերը և(կամ) սահմանել որոշակի ժամանակահատված, որի ընթացքում տուժանք չի գանձվում, ընդ որում տուժանքի չափերի փոփոխությունը և որոշակի ժամանակահատվածի սահմանումը, որի ընթացքում տուժանք չի գանձվում, ուժի մեջ է մտնում ծանուցման մեջ նշված ամսաթվից:

4.4. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

4.5. Եթե անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերը պարտավոր են միմյանց միջև համաձայնեցնել (պայմանավորվել) հետագա գործողությունները:

4.6. Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարող կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս կողմին կապի, ներառյալ ինտերնետի միջոցով գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության և պարտավորությունները չկատարելու մասին: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության մասին ողջամիտ ժամկետում չտեղեկացնելը նման պարտավորություն կրող կողմին գրկում է վկայակոչել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայությունը որպես պատասխանատվությունից ազատելու հիմք:

#### **Բաժին 5. Փոխադարձ հաղորդակցությունը (նամակագրությունը)**

5.1. Կողմերն անվերապահորեն համաձայնվում և պայմանավորվում են, որ բոլոր ծանուցումները, խնդրանքները կամ այլ գրագրությունները, որոնք վերաբերում են Պայմանագրով Կողմերին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացմանը, պետք է լինեն գրավոր կամ էլեկտրոնային ձևով, այդ թվում sms կարճ հաղորդագրության միջոցով, գրավորները՝ պետք է ստորագրված լինեն Կողմերի լիազորված անձանց կողմից, և ուղարկվեն Պայմանագրի 4-րդ բաժնում նշված ծանուցման հասցեներով:

5.2. Դատարանը, ֆինանսական համակարգի հաշտարարը, ինչպես նաև պետական մարմինները կարող են Կողմի պահանջով Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների և պարտականությունների իրականացման ժամանակ կիրառել սույն բաժնով սահմանված ծանուցման կարգը:

5.3. Ընկերության կողմից ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է մյուս կողմի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեին, համարվում է Վարկառուի կողմից պատշաճ ստացված նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, կամ նշված յոթօրյա ժամկետում համապատասխան պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ուղարկած էլեկտրոնային փոստի հասցեին պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ստանալու մասին հավաստում ուղարկելու պահից: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը պարունակող էլեկտրոնային նամակի ուղարկման օրով:

5.4. Յուրաքանչյուր նման ծանուցում համարվում է նաև պատշաճ կարգով հանձնված դրա հասցեատիրոջը, եթե կատարվել է (ա) պատվիրված նամակով և առկա է ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, կամ (բ) առձեռն փոխանցմամբ և առկա է ծանուցումը հանձնված լինելու մասին Կողմի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ Կողմի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը, կամ (գ) ծայնային կամ SMS կարճ հաղորդագրությունների միջոցով և առկա է դրանց ստացման վերաբերյալ հավաստումը, կամ (դ) օրենքով սահմանված հրապարակային եղանակով:

5.5. Եթե սույն բաժնի 5.6 կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց ծանուցման հասցեները փոխելու մասին, ապա այդ հասցեներով սույն բաժնում նշված գրավոր

փաստաթղթերը համարվում են հասցեատիրոջը պատշաճ կարգով հանձնված: Բոլոր ծանուցումները դրանց հետ կապված հետևանքներ են առաջացնում այդ ծանուցումները պատշաճ կարգով հանձնված համարվելու պահից:

5.6. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի փոփոխել Պայմանագրի շրջանակներում օգտագործվող իր ծանուցման հասցեն և այդ մասին Կողմը պարտավորվում է տասը օրվա ընթացքում տեղեկացնել մյուս Կողմին միմյանց ծանուցման (փոստային) հասցեների (գտնվելու վայրերի և Պայմանագրում ներառված այլ տվյալների) փոփոխությունների մասին, հակառակ դեպքում Կողմերի միջև Պայմանագրից բխող գրավոր թղթակցություններն իրականացվում են Կողմերի կողմից Պայմանագրում նշված ծանուցման հասցեներով: Փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

## **Բաժին 6. Վեճերի լուծում**

6.1. Վարկառուն հնարավորություն ունի Պայմանագրից բխող բողոք-պահանջը ներկայացնել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով:

6.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի լուծումը, Կողմերի համաձայնությամբ, իրականացվում են Պայմանագրի 3.5. կետով նախատեսված տարբերակով:

6.3. Արբիտրաժային դատարանում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին, Արբիտրաժային դատարանի կանոնադրությանը և արբիտրաժի կանոնակարգին համապատասխան, համաձայն որին ձևավորվում է արբիտրաժային տրիբունալը:

6.4. Վարկառուն հավաստում է, որ ծանոթացել է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Արբիտրաժային դատարանի կանոնադրությանը և արբիտրաժային կանոնակարգերին, դրանցով սահմանված իր իրավունքներին և պարտավորություններին: Ընկերության կողմից նրան բացատրվել են Պայմանագրի 3.5. կետով նախատեսված վեճերի լուծման դատական և արբիտրաժային տարբերակների տարբերությունները և դրանցից յուրաքանչյուրի ընտրության հետևանքները, որոնց կապակցությամբ Վարկառուն առարկություններ չունի: Վարկառուն հավաստում է, որ ընտրությունը կատարվել է անձամբ իր կողմից՝ առանց որևէ ուղղորդումների և պարտադրանքի:

6.5. Արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային տրիբունալն անկախ է գործող ընդհանուր դատական համակարգից: Արբիտրաժային համաձայնության հետ անհամատեղելի չի համարվում և արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված իրավունքներից հրաժարում չի հանդիսանում արբիտրաժի կողմի՝ արբիտրաժից առաջ կամ դրա ընթացքում ցանկացած պահի հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարանի դիմելը և դատարանի՝ նման ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշում կայացնելը:

6.6. Արբիտրաժային դատարանի ընտրության պարագայում՝

- 1) Վեճերի ծագման դեպքում ձևավորվում է միանձնյա արբիտրաժ կամ արբիտրաժային տրիբունալ: Կողմերի համաձայնության առկայության դեպքում ցանկացած վեճ կարող է լուծվել միանձնյա արբիտրաժի կողմից: Հայցվորները կարող են ընտրել արբիտրներին: Արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է արբիտրաժային տրիբունալի ձևավորում զույգ կազմով, ապա արբիտրների թիվը պետք է մեկով ավելացվի:
- 2) Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

3) Կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, ապահովման կամ հատուցման մասին պահանջները, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ, եթե կողմերն այդ հաղորդումների անհրաժեշտ տարրերի վերաբերյալ այլ բան չեն պայմանավորվել:

4) Արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ որոշման կայացմամբ:

5) Քննելով վեճին վերաբերող բոլոր հանգամանքները՝ արբիտրաժային տրիբունալը վճռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը պարտադիր է: Վճռի վիճարկումը դատարանում կարող է իրականացվել միայն այն չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու ճանապարհով: Եթե արբիտրաժի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային տրիբունալը դադարեցնում է գործի քննությունը, և կողմերի միջև կնքվում է հաշտության համաձայնություն:

6) Արբիտրաժային տրիբունալը արբիտրաժի ավարտի վերաբերյալ կայացնում է որոշում այն դեպքում՝ ա) երբ հայցվորը հրաժարվում է հայցից, բացառությամբ, երբ պատասխանողն առարկում է գործի վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային տրիբունալը ճանաչում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում, բ) երբ կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ, գ) երբ արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ գործի քննության շարունակումը որոշակի պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին:

6.7. Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում Վարկառուն գիտակցում է, որ Արբիտրաժային դատարանի վճիռը լինելու է վերջնական, ենթակա չի լինելու բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Վարկառուն պարտավորվում է հետագայում չշահարկել և չվիճարկել այդ փաստի վերաբերյալ իր տեղեկացվածության հանգամանքը:

6.8. Կողմերը պայմանավորվում են, որ Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում Արբիտրաժային դատարանի վայրն է ք. Երևան, Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է և վեճի քննությունը իրականացվում է միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման և Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, ուղարկվում են Պայմանագրի 4-րդ բաժնում նշված հասցեներով և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, եթե Պայմանագրով սահմանված կարգին համապատասխան միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային հասցեները (գտնվելու վայրերը) փոխելու մասին:

6.9. Կողմերը համաձայնվում են, որ Պայմանագրից բխող գումարի բռնագանձման և դրա հետ փոխկապակցված պահանջներով գործերը, անկախ բռնագանձման ենթակա գումարի չափից, Հայաստանի Հանրապետության դատարաններում քննվելու դեպքում, քննվելու են պարզեցված վարույթի կարգով: